«Երևանի Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա	Անգլերեն
Մասնակից	Անահիտ Ոսկանյան
Ղեկավար	Գայանե Վարդանյան
Թեմա	Դասի պլանավորում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան....3
Բուն թեմա....4
Ուսուցման մեթոդ....4
T-աձև աղյուսակ....5
Վենի դիագրամ....6
Պրիզմա....7
Բառապաշարի բովանդակային ուսուցման....8
Եղանակներ....8
Համագործակցային ուսուցում....9
Ինչ պետք է անի ուսուցիչը համագործակցային....9
Ուսուցում կազմակերպելու համար....9
Խորհուրդներ ուսուցիչներին համագործակցային ուսուցում ճիշտ կազմակերպելու համար....10
Եզրակացություն....11
Դասի պլանավորում....11
Դասից առաջ....11
Բուն դասը....12
Խթանման փուլի հիմնական նպատակներից են.....12
Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել....12
Խթանման փուլում....12
Իմաստի ընկալման փուլի հիմնական նպատակներից են՝....13
Մեթոդներ և մեթոդական հնարներ որոնք հարմար են կիրառել իմաստի ընկալման փուլում....13
Կշռադատման փուլի նպատակներից են.....13
Դասից հետո....14
ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ....14

Նախաբան

Հանրակրթական դպրոցի ուսուցչի մասնագիտական գործունեության կարևորագույն տեսակներից մեկը դասի պլանավորումն է:Պլանավորման հիմնական նպատակը դասավանդման նպատակաուղղվածությունը և օպտիմալությունն ապահովելն է: Պլաններում տրվում են ընկալման ենթակա ուսումնական նյութի բաշխման հաջորդականությունը և մատուցման տևողությունը: Պլանավորումն իրականացվում է հիմնական հոգեբանական, դիդակտիկ և մեթոդական սկզբունքներին և դրույթներին համապատասխան:

Հետևյալ կարեվորագույն պայմանների պահպանման ամբողջականությունն ապահովում է ուսումնական գործընթացի պլանավորման հայողությունը.

1. Առանշրկայի դասավանդման նպատակներ.
2. Առկա դասավանդման միջոցներ(ուսումնական չափորոշիչ, ծրագիր,դասագիրք, ուսուցչի գիրք և այլն)
3. Ժամանակակից դասի հիմնական մեթոդական պահանջներ.
4. Դասավանդման հոգեբանական (աշակերտների տարիքը, նրանց ընդհանուր զարգացվածության աստիճանը, հետաքրքրությունների, ցանկությունների, հակումների շրջանակները):

Գործնականում առավել տարածված են օրացուցային, թեմատիկ և օրվա դասի պլանավորման տեսակները:

Օրացուցային պլանավորումը նպատակ ունի նշել ուսումնական նյութի բաշխվածությունը ըստ ժամանակի: դրա համար ծրագրի օգնությամբ վորոշվում է դասավանդման հիմնական թեմաներն ու ժամկետները: Պլանավորման տվյալ տեսակը կողմնորոշում է ուսուցչին ժամանակի առումով, զգուշացնում է աշխատանքում ուշացման, ինչպես նաև ավելորդ շտապողության մասին: Օրացուցային պլանները կազմվում են կիսամյակի կամ ամբողջ տարվա համար:

Թեմատիկ պլանավորման հիմնական նպատակն է թեմայի ուսումնասիրման համար ուսուցչի և աշակերտի աշխատանքի նպատակների և խնդիրների, նյութի բովանդակության միջոցների, մեթոդների և հնարքների վորոշումը և հստակեցումը:

Օրվա դասի պլանավորումը իրենից ներկայացնում է թեմատիկ պլանում արտացոլված աշխատանքի նպատակների, բովանդակության, միջոցների,հնարքների և ձևերի հստակեցումն ու մնարամասնումն առանձին դասի շրջանակներում:

Դասի նպատակային դրույթը պետք է հստակ որոշի թե աշխատանքի ընթացքում ինչի վրա պետք է դարձնել հիմնական ուշադրությունը, որը կօգնի ուսուցչին ավելի արդյունավետ պլանավորել դասը:

Բուն թեմա

Ուսուցման մեթոդ

Ուսուցման մեթոդը (հոնարեն metodos ճանապարհ ինչ-որ տեղ, ինչ-որ բանի տանող): Եթե թորձենք ընդհանուր առմամբ բնութագրել մեթոդը, ապա կարող ենք ասել, որ այն մանկավարժական գործունեության մի միջոց է, հնար, հիմնական գործիք, որով իրականացվում է ուուցչի և աշակերտի համագործակցությունը ուղղված ուսումնաառության նախանշված արդյունքին: ՈՒսուցման մեթոդը իր մեյ ներառում է երեք կարևոր խնդիր ինչ սովորեցնել, ինչու, ինչի համար սովորեցնել(կրթության նպատակներ) և ինչպես սովորեցնել (ուսուցման մեթոդիկա): այս բոլորի իրականացման համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ, ձևեր, որոնք հանդիսանալով ուսումնական գործընթացի կարեվորագույն բաղադրիչ, կապ են ստեղծում ուսուցման պլանավորած նպատակի և վերջնական արդյունքի միջև:

Վերջին շրջանում մանկավարժական գրականության մեջ շատ է խոսվում ինտերակտիվ/համագործակցային մեթոդների արդյունավետ մեթոդների մասին:

Ուսուցիչը ազատ է մեթոդների ընտրության հարցում: Բայց այդ ընտրությունը չի կարող կամայական բնույթ կրել քանի որ մեթոդի կիրառման բուն նպատակը ոչ թե պարզապես դասն աշխուժացնելն է կան բաց դասի ընթացքում գործընկերների առջև մանկավարժական վարպետությամբ փայլելը այլ առաջին հերթին մեթոդական ողջ զինանոցի կիրառմամբ ուսուցման նպատակների իրականացման հասնելը:Այլ կերպ ասաց `պետք է ոչ թե «տեխնիկա ցուցադրել», այլ հասնել դասի՝ նախապես ծրագրված նպատակին:

T-աձև աղյուսակ

T-աձև աղյուսակը օգտագործվում է միևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Իր ձևով T տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում է միևնույն հասկացության, խնդրի հակադի հակադիր որակները, դրական կամ բացասական կողմերը: Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննարկումների ժամանակ երկու տարբեր պատասխանների(այո/ոչ,կողմ/դեմ) գրառման համար:

Օրինակ՝ աշակերտները կարող են անդրադառնալ T-աձև աղյուսակին, երբ պատրաստում են անհատական կամ խմբովի որևէ նախագիծ իրականացնել:

Դրական կողմեր	Բացասական կողմեր

T-աձև աղյուսակը ճկուն է նաև այն իմաստով, որ դրա օգտագործումը արդյունավետ է դասերի տարբեր փուլերի ընթացքում և տարբեր առարկաներ ուսումնասիրելիս:

Վենի դիագրամ

Վենի դիագրամը կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում: Այս դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմիանց հակադրելու կամ դրանց ընհանրությունները ցույց տալու նպատակով: Եթե փորձենք համեմատել Վենի դիագրաման T-աձև աղյուսակի հետ, ակնհայտ կլինի, որ Վենի դիագրամով հստակ առանձնացվում և կարևորվում են երկու(երեք…) հասկացությունների ընդհանրությունները, և շեշտվում են յուրաքանչյուրի բնորոշ առանձնահատկությունները:



Սա ևս անհատապես կամ խմբով (հաճախ ավելի արդյունավետ է՝ զույգերով) կատարվող վարժություն է, որը տեղեկատվության մեծ և մանրամասն պաշար չի պարունակում, չնայած կարևոր է նշել այն հանգամանքը, որ ընդհանրություններն ու առանձնահատկությունները նշելիս աշակերտներից պահանջվում է ընդգրկուն ձևակերպումներ գրառել:

Վենի դիագրամը կարող է ունենալ ինչպես պարզ կառուցվածք (երկու հասկացության համեմատության համար), այնպես էլ՝ այնպես էլ բարդ(երեք-չորս հասկացությունների համեմատության համար):





Պրիզմա

Պրիզման ևս մտածողության ընթացքը պատկերավոր, շո՛ափելի դարձնելու պարզ ձև է: Պրիզման կիրառվում է դասի խթանման փուլում՝ ապահովելով ինչպես աշակերտների հետաքրքրությունը ու ակտիվությունը, այնպես էլ արդյունավետ սկիզբ նյութի ուսումնասիրման բուն ընթացքի համար:

Ընթացքը

- Տրվում է մեկնաբառը՝ այն հիմնական հասկացությունը, միտքը, թեման, ինչ է ենթակա է ուսումնասիրության:
- Սխեմայի հաջորդ երկու վանդակներում առանց քննարկման գրանցվում են մեկնաբառի ազդեցությամբ մտքում ծագած առաջին երկու պատահական բառերը:Հարկ է նշել նաև, որ խմբային աշխատանքի ժամանակ գրանցվում են առաջինը հնչած բառերը: Պետք է հետևել որ հնարավորինս կանխվեն գիտակցական մակարդակում ծնված բառերի ու հասկացությունների գրանցումը և խրախուսվեն ենթագիտակցական ոլորտում ծնված ասոցիատիվ կապերը:
- Ասոցիատիվ մտածողության վրա հիմնվող այս ընթացքը շարունակվում է մինչև վերջ: առավել արդյունավետ է երեք շերտով բացված պրիզման, որից հետո պրիզման սկսվում է փակվել:
- Պրիզման եզրափակվում է վերջնաբառով:
- Պրիզմայի ամփոփիչ քայլը մեկնաբառի ու վերջնաբառի միջև տրամաբանական կապ գտնելն է, որը պետք է իր արտացոլումը գտնի մեկ նախադասության կամ մեկ մտքի մեջ,որին հետո կարելի է անդրադառնալ նյութի ամփոփման ժամանակ:
- Այսպիսով եթե պրիզմայի կառուցման ամբողջ ընթացքում ակտիվանում է ենթագիտակցական ոլորտը, ապա վերջին քայլում մեկնաբառն ու սկզբնաբառն մեկ մտքի կամ նախադասության մեջ կապելիս ակտիվանում է գիտակցական ոլորտը:

Բառապաշարի բովանդակային ուսուցման Եղանակներ

Լեզվի և այլ առարկաների ուսուցիչները կարող են համատեղել իրենց ջանքերը, ուսումնասիրելով ուսումնական նյութը/տեքստը ամեն մեկն իր տեսանկյունից և մշակելով յուրաքանչյուրն իր խնդիրների լուծմանն ուղղված հանձնարարություններ: Նշենք, որ բովանդակային ուսուցման ժամերին լեզվի բառապաշարի և քերականության ուսուցումն շեշտակի հաղորդակցական նպատակներ է հետապնդում:

- Գիտելիքի/տեքստի տվյալ հատվածի ընդհանուր ներկայացում
- Ուշագրավ բառերի, կապակցությունների, դարձվածքների ընդգծում
- Դրանց իմաստի քննարկում, կռահում աշակերտների կողմից
- Դրանց իմաստի ներկայացում սահմանման, հոմանիշների կամ թարգմանական եղանակով ուսուցչի կողմից
- Աշխատանք լեզվանյութի հետ,որի ժամանակ օգտակար կլինեն National Corpus British կայքերը:
- Աշխատանք բառարաններով և տեղեկատուներով
- Ինքնուրույն օրինակների կազմություն
- Տեքստային միավորների վերարտադրում,հաղորդում նոր բառամիավորների գործածությամբ
- Անծանոթ բառամիավորների իմաստի գուսակում, արտածում համատեքստի բովանդակությունից:

Բառապաշարային միավորները կարելի է ուսուցանել ըստ կարգային թեմատիկ բովանդակության, դրանք գրաֆիկական եղանակով խմբավորելու միջոցով: Ահա այդպիսի եղանակներից մի քանիսը.

- All the word that belong to the same theme(concept maps, word card)
- Word that belong to the same grammatical category

Համագործակցային ուսուցում

Համագործակցային ուսուցման ժամանակ սովորողները, համագործակցելով փոքր խմբերով ձևավորում են ընդհանուր հասկացություններ և հմտություններ: Աշակերտները համագործակցային միջավայրում են կառուցում իրենց հմտությունները՝ խոսելու, բացատրելու, բանակցելու, վիճարկելու և հարցեր տալու միջոցով:

Համագործակցային ուսուցումն իրականանում է համագործակցային դասի միջոցով:

Համագործակցային դասը մի գործընթաց է, որը հիմնականում կազմված է տրամաբանորեն իրար հաջորդող վարժություններից: Դրանց կատարման ընթացքում միասին սովորելով և փորձարկելով/կիրառելով սոցիալական, ինքնաճանաչման և մտածողության հմտություններ՝ սովորողներն ակտիվորեն կառուցում են նոր գիտելիքներ և ձեռք են բերում ու զարգացնում նոր հմտություններ:

Ինչ պետք է անի ուսուցիչը համագործակցային

Ուսուցում կազմակերպելու համար

- Անհրաժեշտ է դասագրքի նյութը, դասապլանները, դասապրոցեսը, առաջադրանքները կառուցել այնպես, որ սովորողները համագործակցելու կարիք ունենան:
- Ուսումնական նյութը ուսուցման մեթոդները համապատասխանեցնել կոնկրետ առարկայի, կոնկրետ դասարանի կարիքների:
- Հաշվի առնել այն խնդիրները, որ կարող են առաջանալ առանձին աշակերտների միջև՝ փորձելով միջամտել, կանխել հնարավոր ձախողումները, կոնֆլիկտները:
- Հաշվի առնել սովորողների խմբային և անհատական պատասխանատվությունը:

Խմբային աշխատանքի պարագայում պետք է հաշվի առնել ինչպես ամբողջ խմբի աշխատանքի արդյունքը, այնպես էլ խմբի յուրաքանչյուր անդամի ներդրումը: Վերջինս

հաշվի չառնելու դեպքում որոշ սովորողներ պարբերաբար «գլուխ կպահեն», ինչի արդյունքում համագործակցային ուսուցումը կձախողվի:

Համագործակցային ուսուցման կարևոր միջոց է խմբային աշխատանքը, սակայն ուսուցչի համար շատ կարևոր է հասկանալ, որ փոքր խմբերը միշտ չէ որ համագործակցային են:Աշակերտներին մի սենյակում նստեցնելը, մի խմբում ընդգրկելը, նույն առաջադրանքը տալը դեռևս բավարար չեն համագործակցային ուսուցման մասին խոսելու համար: Ուսուցիչները պետք է նկատի ունենան այն համգամանքը, որ փոքր խմբերով աշխատանքներ կատարելու սկզբնական փուլում համագործակցային ուսուցման հավանականությունը փոքր է:

Համագործակցային խմբի աշակերտները պետք է հասկանան, որ իրենց հայողությունը կախված է խմբի բոլոր անդամների ներդրումից: Նման խմբերին պետք է բնորոշ լինի թիմային աշխատանքի ոգին, ընդհանուր նպատակին հասնելու համար առավելագույնը անելու ցանկությունը, արդյունավետ փոխկախվածությունն ու փոխկապվածությունը, սոցիալական փոխազդեցության հմտությունները, խմբի աշխատանքի ընթացքը և արդյունքը մշտապես գնահատելու և վերանայելու կարողությունը:

Խորհուրդներ ուսուցիչներին համագործակցային ուսուցում ճիշտ կազմակերպելու համար

- Առաջադրանքը պետք է հստակ ու պարզ ներկայացնել:
- Խումբը պետք է տեղեկացված լինի ժամանակյին սահմանափակումներին:
- Խմբի և դասարանի աշակերտները պետք է միմիանց լսեն:
- Խմբային քննարկումների ժամանակ ոչ ոք չպետք է իշխի մյուսների նկատմամբ:
- Խրախուսեք մասնակցությունը և հարցերը:
- Թույլ տվեք որ մարդը խոսի:
- Քննադատեք կատարումը այլ ոչ թե անձին:

Եզրակացություն

Դասի պլանավորում

Դասի պլանը գրվում է հակիրճ՝ ըստ դասի հիմնական փուլերի:Հաճախ դասի պլան համառոտագրության մեջ ներկայացվում է հետևյալ բովանդակությամբ աղյուսակի տեսքով՝

- Կազմակերպչական մասը- 2-3 րոպե
- Նոր գիտելիքների հաղորդում-8-10 րոպե
- Աշակերտների գործնական աշխատանք-20-26 րոպե
- Տնային առաջադրանքի հանձնարարում-3-5
- Դասի ամփոփում-1-2 րոպե

Դասից առաջ

Արդյունավետ դասավանդման կարևոր նախապայման է դասին հանգամանալից նախապատրաստվելը: Սա ենթադրում է նյութին մանրամասն ծանոթանալ և դասի ողջ ընթացքը պատկերացնել: Թերևս ամենակարևորը դասի նպատակը հստակ գիտակցելն է. Ուր ենք ուզում հասնել, ինչ ուղիով, ինչ միջոցներով:

Նախապատրաստության կարևոր մաս է կազմում նաև դասասենյակի համապատասխանեցումը տվյալ դասի ընթացքից բխող պահանջների: Ուսուցիչը պետք է դասավորի նյութերը համապատասխանեցնի կահավորանքը և համոզվի՝ արդյոք օգտագործվելիք տեխնիկական միջոցները սարքին են: Հնարավոր է, որ կարիք լինի փոփոխելու մեթոդների հաջորդականությունը՝ իրադրությանը հարմարվելու նպատակով:

Այս ամենի մասին նախորեք հոգալը ուսուցչին լրացուցիչ վստահություն կներշնչի, կօգնի դասի հարթ ընթացքին և ժամանակի արդյունավետ տնօրինմանը

Բուն դասը

Բուն դասի ընթացքը կարելի է բաժանել հետևյալ փուլերի՝ խթանման, իմաստի ընկալման և կշռադատման (ԽԻԿ):

Խթանման փուլի հիմնական նպատակներից են.

- Նախապատրաստել սովորողներին նոր դասի ընկալմանը. Դա կարելի է կատարել նախորդ դասի հարցման, ամփոփման միջոցով, հատկապես, երբ նոր դասը հնի շարունակությունն է:
- Բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների գիտելիքները.Ակտիվացնել աշակերտներին՝ ներգրավելով նրանց քննարկվելիք նյութի մեջ:
- Աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու հմտություններ:

  Դասի նախապատրաստական մասը պետք է սկսել կազմակերպչական հարցերի լուծումով, տնային աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ պարզաբանումներով, նոր դասի թեման և նպատակը հաղորդելով:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել Խթանման փուլում

- Մտագրոհ
- Խմբավորում
- Պրիզմա
- Մտածիր-զույգ կազմիր-քննարկիր
- 5րոպեանոց ազատ շարադրանք:

Իմաստի ընկալման փուլի հիմնական նպատակներից են՝

- Սովորողների մոտ հետաքրքրության աճի պահպանումը
- Տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը
- Նոր և հին տեղեկատվության շաղկապում և իմացության նոր կառույցի ստեղծում

Մեթոդներ և մեթոդական հնարներ որոնք հարմար են կիրառել իմաստի ընկալման փուլում

- T-աձև աղյուսակ
- Գաղափարների քարտեզագրում
- Վենի դիագրամ
- Բանավեճ
- Զրույց
- Ուղղորդված ընթերցանություն

Կշռադատման փուլի նպատակներից են.

- Սովորողները նոր ստացված տեղեկատվությունը կարողանան արտահայտել իրենց բառերով և ձևակերպումներով:
- Նոր գիտելիքների միաձուլում ունեցածին և դրանց աստիճանական ինտեգրացում Դասի պլանը գրելիս պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ժամաբաշխման վրա, որի ճիշտ բաշխումը և նրան հետևելն ամբողջ պլանավորած գործընթացի իրականացման և բարձր արդյունավետության երաշխիք է: Յուրաքանչյուր դասի պլանավորում ենթադրում է ստեղծագործ և լուրջ աշխատանք, որի արդյունքում ուսուցիչը գտնում և մշակում է այն ձևերն ու հնարները, որոնք տանում են դեպի դասի նպատակների իրականացում:

Դասից հետո

Դասից հետո անհրաժեշտ է վերլուծել կատարված աշխատանքը և պարզել թե.

- ՈՒսուցիչը հասավ արդյոք դասի նպատակին:
- Արդյոք իրականացան դասի նպատակներին հասնելու ակնկալիքները և ինչ չափով:
- Ճիշտ էին արդյոք ընտրված մեթոդները:
- Ժամանակի բաշխումը որքանով էր իրատեսական:
- Ինչը կարելի էր ավելի ճիշտ կազմակերպել և ինչպես

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Ամիս,ամսաթիվ 11.10.2021 Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի թեման MY heart is in the Highland

_____ ,էջ 28

Դասի նպատակները

ա/ակադեմիական

- կարդալ և թարգմանել
- պատասխանել հարցերին
- պատմել

բ/սոցիալական

- սովորել բառային աշխատանք բաժնի բոլոր բառերը
- թարգմանել անծանոթ բառերը

Անհրաժեշտ պարագաներ գիրք , բառատետր,բառարան,

_____

Ցուցադրական նյութեր անծանոթ բառերը գրել գրատախտակին

_____

Հիմնական հասկացություններ կատարել՝ Focus on Grammar: Ajectives, Degrees of Comparision

Դասի ընթացքը.

Խթանման փուլի նկարագրությունը և տևողությունը գաղափար կազմել դասի մասին և կատարել բառակազմական աշխատանքներ

Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը և տևողությունը աշխատանք տեքստի Շուրջ և Check up 1 բաժնում: ԵՎ հարց ու պատասխանի միջոցով ամփոփել տեքստը:

Կշռադատման,գնահատման փուլի նկարագրությունը և տևողությունը Դիդակտիկ Խաղ՝«Ով շատ և շուտ կասի»

Տնային հանձնարարություն Կարդալ և պատմել տեքստը կատարել էջ 29 N 22

Գրականություն

1. Հանրակրթության պետական կրթակարգ. Միջնական կրթության պետական չափորոշիչ, Անտարես, Երևան,2004:
2. Զոհրաբյան Ա. , Հովհաննիսյան Գ. , Առնաուդյան Ա. ,և ուրիշներ, Կառուցողական ուսուցման հիմունքները և մեթոդները.
3. Ա. Առնաուդյան, Ա. Գյուլբուդաղյան, Ս. Խաչատրյան, Մ. Պետրոսյան, մասնագիտական զարգացման ձեռնարկ,ԿԱԻ: